ոչ փարատի, և նայ ասէ. Մինչ ոչ փոխեսցես զՋուր՝ ոչ առողջանաս։ Զայս ասաց արքայ առ վէզիր. և նա ասէ. Արքա՛յ, բարւոք ասացեալ է, առաքեսցուք արս զի բերցեն քեզ Ջուր ի հեռուստ։ Եւ դարձեալ ըստ սովորութեան մտանէ բժիշկն առ արքայ և ասէ թէ Ահա՛ ըստ ասից քոց ի հեռուստ բերին զի անտի ըմպիցեմ։ Եւ բժիշկն ասէ. Ոչ թէ միայն ի Ջրոյ լինի առողջութիւն, այլ և ի տեղեաց և ի բուն հողոյ։ Զայս դարձեալ ասէ արքայ առ վէզիրն. և կոչեալ վէզիրին զբժիշկ և ասէ. Ո՛վ անիմա, նախասացեալն քո առ արքայ ես պատճառեցի թէ բերցեն զՋուր ի հեռուստ, ընդէ՞ր զխօսս իմ ստեցեր և նոր իմն յիշատակեցեր ասելով զհող։ Եւ նոյնժամայն առնէ զնայ խեղդամահ, որ էր այր երեւելի եւ կարդացող։ Եւ զհրէայ ոմն բժիշկ Հայաթիօղլի տանին առ արքայ, և նա տեսեալ ասէ. Ո՞րպէս մարդ է սայ. և ասեն նախարարք՝ Կեաւուր, զի մի և առաւել գարշեսցի ի հրէութենէն։ Եւ ոչ տայ զձեռն իւր ի տեսութիւն նմա, այլ դնեն սպիտակ փակեղ ի գլուխ նորա և տաճկանայ և ապա մերձենայ առ արքայ։ Եւ ի սկզբանէ հրէայն այն հերձուածող էր եւ կարդացող տաճկի եւ իւրեանցն. և արարին հէքիմպաշի և կայր յիսպաս յապարանս։ Եւ երրորդ՝ թէ զբերդ առաք, և ա՛յս էր գործ աշխատութեան մեր, և ի կատար գործոյն աստ պատշաճեցաւ գալուստ մեր, որ էր Բշի մուտն Հոկտեմբերի ամսոյ։

Ըստ կարգի ի լրման բանիս պատմեցից և զայս ինչ, զի յեղն Մայիսի եկեալ առ պատրիգն Մարտիրոս արք երևելիք և քահանայք Բ հանճարեղք ի ձորակէն Ակնոյ՝ խնդրել զնամակս վասն ժողովի եկեղեցոյ նոցա, զոր ամօք բազմօք կայր այրեալ, և ոչ տային հրաման շինութեան նորին ով ոք որ լինէր փաշայ։